

ՀԱՅՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

ԳԱՐԻԵԼԱ ՈՒՈՒՀԱՋՅԱՆ (Խոսվա)

Ներկա հաղորդումը նվիրված է հայկական մշակույթի այն կոթողներին, որոնց ուսումնասիրությամբ զբաղվել սկսեցին իտալական գիտաբանների մասնակիցները պրոֆ. Ալպագո-Նովելլոյի ղեկավարությամբ Հյուսիսային Իրանում 1976—1977 թթ.։ Այդ տարիներին թեև բավականաչափ նյութեր ենք հավաքել, սակայն դեռևս շատ աշխատանք կա կատարելու Իրանում եղած հայկական արձանագրություններն ուսումնասիրելու և հրապարակելու ուղղությամբ։

Մեր աշխատանքի ընթացքում հնարավոր եղավ ամբողջությամբ լուսանկարել Ս. Ստեփանոս վանքում այժմ եղած վիմագրությունները, որոնք ներկայացնում են ավելի քան հարյուր ուխտավորական հիշատակարաններ, և կազմել հարուստ հավաքածու, որը դեռևս կարիք ունի վերջնական կարգավորման և ուսումնասիրման։

Հիշատակարանները պարունակում են արժեքավոր տեղեկություններ Ս. Ստեփանոս վանքի և նրա մատակա ու հեռավոր հայկական գյուղերի միջև եղած սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին վերջին երեք դարերի ընթացքում։

Ս. Ստեփանոս վանքի վիմագրություններից, մոսավորապես 15 հատ, որոնք վերաբերում են վանքի վերանորոգմանը, լույս կտեսնեն Documenti di architettura armena շարքի 10-րդ հատորում։

Այս հաղորդման մեջ մեր նպատակն է ուշադրություն հրավիրել մի քանի վիմագրությունների վրա, որոնք, մեր կարծիքով, մինչև այժմ աննկատ են մնացել և կարող են նոր տեղեկություններով հարստացնել իրարից հեռու գտնվող և իրենց շրջակայքի հետ տարբեր հարաբերություններ ունեցող երկու բնակավայրերի պատմությունը։ Այդ գյուղերն են՝ Հաֆթվանը Սալմաստի շրջանում և Դարաշամբը Արաքսի աջ ափին, Ս. Ստեփանոս նախավկայի վանքի շրջանում։

Սալմաստ քաղաքը (այժմ վերանվանված Շափուր) պատմական Զալհափանն է, որը հայկական աղբյուրներում հիշատակվում է դեռևս V դարից։ Այս մասին վկայում է Փավստոս Բուզանդը¹։ Սակայն մեր քննած վիմագրությունները (հնագույնը XVII դարից) տվյալ հայ գաղութի պատմության մասին նոր տեղեկություններ կարող են հաղորդել միայն վերջին երեք դարերի վերաբերյալ։

* Այս հաղորդումը որպես զեկուցում կարդացվել է Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ գիտաժողովում (Նրևան), ճարտարապետության բաժնի նիստում, 16. 9. 1978 թ. և Փալաստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, IV, էջ 55։

Վիժազրական և մատենադրական աղբյուրները, ինչպես նաև ճարտարապետական հուշարձանները, վկայում են ալն մասին, որ Սալմաստի շրջանում եղել են բազմաթիվ գյուղեր, որոնց մեծ մասը զուտ հայաբնակ է եղել: Վերջին երեք տասնամյակների ընթացքում երկու հանգամանք՝ նախ՝ 1946—1947 թթ. ներգաղթը, ապա՝ բնակիչների հոսքը դեպի մեծ քաղաքները, մանավանդ՝ Թավրիզ և Թեհրան, փոխել են այդ գյուղերի բնակչության համամասնությունը, նվազեցնելով հայերի թիվը:

Այս հայաբնակ գյուղերը նկարագրվում են տարբեր հեղինակների ծանադարձորդական ուղեգրություններում²: Հիշատակվում են հատկապես Փայաջուկը, Սառնան, Սավրան, Ղալասարը, Խոսրովան, Մահլամը և Հաֆթվանը:

XIX դարի հեղինակները Հաֆթվանը ներկայացնում են որպես մի գյուղ, որն ունեցել է հոգևոր և մշակութային բարձր մակարդակ, շատ եկեղեցիներ, գյուղացի, թաթար և գրադարան: Ինչո՞ւ այստեղ մնացել է ընդամենը մի քանի հալ ընտանիք: Վերոհիշյալ հաստատություններից էլ գործում է միայն մայր եկեղեցին, ուր տոների առիթով մյուս գյուղերից կամ նույնիսկ Սալմաստից դալիս էն սակավաթիվ հայ հավատացյալներ:

Դյուղի եկեղեցիներից, ինչպես ասացինք, այսօր կանգուն է միայն Ս. Գևորգը, որի արևմտյան երեսը շատ վերանորոգված տեսք ունի, բացի մուտքի շրջանակից, որտեղ փորագրված են բազմաթիվ ուխտավորական հիշատակարաններ: Կան նաև վերանորոգման կամ շինության վերաբերյալ արձանագրություններ, որոնք կազմում են մեր ներկա քննության առարկան:

Այս եկեղեցու արևմտյան մուտքի վերևը, ճիշտ կենտրոնում կա մի վիժազրություն, որը տեղեկացնում է դռան վերանորոգման մասին (նկ. 1):

ՎԵՐԸՍՏԻՆ ՆՈՐՈԳԵ/ՅԱԻ ԴՈՒՌՆ ՍԲ ԳԷՈՐԶԱ/

ՁԵՌԱՄԲ ՔՌԱՆԿԻՆ /ՄՇՍԻ ԿԱՐԱԲԵՏԻՆ ԱՐՏԵԱՄԲ/ ...ՎՅՂՈՐՄ...

Երրորդ տողում «քռանկին» անվան փոխարեն, որը բոլորովին չի հանդիպում որպես հայկական անձնանուն, ճիշտ ենք համարում ընթերցել «քռանկին»: Հնարավոր է, որ վիժազիրը փորագրողը Ֆ տառի փոխարեն, որը հայերենում քիչ է գործածվում, սխալմամբ փորագրած լինի Բ: Նման վրիպակներ կան նաև Ս. Ստեփանոս վանքի արձանագրություններում:

Չորրորդ տողի վերջին բառը՝ «արտեամբ», մասամբ միայն ընթեռնելի է: Պարզ է, որ այստեղ փորագրիչի բարբառային արտասանության հետևանքով ձայնիկ բաղաձայնը փոխարինվել է խուլով: Սույն արձանագրության մեջ ուրիշ երկու օրինակ ևս ապացուցում են, որ փորագրողը ճշգրիտ չի դանազանում ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայնները: Այսպես, սղված ձևով գրված է «Կարաբետ» բեճ-ով, փոխանակ «Կարապետ»-ի պն-ով և «Գեորքա» ֆե-ով, փոխանակ «Գեորգա» զիմ-ով:

Վերջին տողը գրեթե բոլորովին ջնջված է. կարդացվում է միայն ...ռղռ..., որը հավանաբար «ռղռմի» բառի սկիզբն է:

² Պ ե տ ո, Ճանապարհորդական հիշողություններ, «Մուրճ», 1892, էջ 893—898: Ա. Հ ա կ ո բ յ ա ն, Պարսկահայք, «Արարատ», 1898, № 9, էջ 403—405: Ե. Ֆ Ր ա ն գ յ ա ն, Ատրպատական, Թիֆլիս, 1905:




Նկ. 1

Ավելի հետաքրքրական են նույն եկեղեցու երկու այլ վիմագրություններ, որոնք գտնվում են մուտքի ձախ կողմում, մեկը մյուսից ներքև, փորագրված շատ բարակ, ուշ երկաթագրով և դժվարընթեւների են:

Ներքևի արձանագրությունը վերաբերում է եկեղեցու շինարարությանը: Այն բաղկացած է հետևյալ տասը տողերից (նկ. 2).

ՇՆՈՐՀՕՔ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԵՒ ԱՐԴՅԱԻՔ ԵՒ
ՈՂՈՐՄՈՒԹ(ՆԱՄԲ) Ս(ՈՒՐ)Բ Հ(Ո)Գ(ՈՅ)Ն ՇԻՆԵՑՕ ԵԿԵՂԵՑԻՍ Ս(ՈՒՐ)Բ
ԳԷՈՐԳ(Ա)Յ Հ(Ո)Գ(Ո)Ց ՓՐԿՈՒԹԵ(ԱՆ) ՊԱՐՈՆ ԱՄԵՊԿ(ԻԻ)ԼԻՆ (?)
ԵՒ ՊԱՐՈՆ ՄԷԼԻՔ ԱԼԷՔՍԱՆԻՆ ԵՒ
ԹՈՎ(ՄԱ)ՈՒՆ ԵՒ ԱԻ Հ(Ա)ՍԱՐԱԿ Ք(Ա)Հ(ԱՆԱ)ՅԻՑ ԵՒ ԱՄ(ՆՆԱՅՆ) ԺՈ
ՂՈՎՐԴԻՆ՝ ԱՐԱՆՑ ԵՒ ԱՆՕԺԵԻՑ ՏՂՈՑ
Ի ՀԱՅՐԱՊ(Ե)Տ(Ո)Ի(Թ)Ե(ԱՆ) ՏՆ ՓԻԼԻՊ(Ո)ՍԻ ԵՒ ՄԵՐ ՅԱՐՀԵՊ(ԻՍ)-
Կ(ՈՊՈՍՈՒԹԵԱՆ)՝

ՅՈՎ(Ա)ՆԷՍ Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ ԵՒ ԵՍԱՅԻԱ Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ



Նկ. 2

Ի Թ(Ա)Կ(ԱԻՈ)ՐՈՒ(Թ)Ի(ԻՆ) ՓՈՔՐ ՇԱՀՊԱՍԻՆ
ԽՂ ՌՃԱ

Այս խմբի վիճագրություններից սա ամենակարևորն է։ Սրանից վստա-
հորեն իմանում ենք, որ եկեղեցին նվիրված է Ս. Գևորգին և նրա շինու-
թյունը կատարվել է 1652 թ.։ Հետաքրքրականն այն է, որ բացի առանձին
պատվիրատուների անուններից, հիշատակվում են նաև քահանաները և ամ-
բողջ համայնքը, իբրև եկեղեցու շինարարության մասնակիցներ։

Հիշատակված թվականը ճշգրտորեն համապատասխանում է պատմական տվյալներին. նախ հիշվում են ժամանակի հեղինակավոր հոգևորականները՝ հռչակավոր Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը (1633—1655 թթ.), Հովհաննես վարդապետը, որը հայկական տպագրական արվեստի մղիչն է եղել (նա է, որ 1647-ին նոր Զուղայում տպագրել է Պարզատումարը) և հետո ձեռնադրվել Հին Զուղայի եպիսկոպոս։ Հիշվում է նաև մի Եսայի վարդապետ, որի ինքնությունը դժվար է որոշել։ Հր. Աճառյանը իր Հայոց անձնանունների բառարանում չի նշում նրա մասին, բայց ժամանակագրական տեսակետից նրան կարելի է նույնացնել այն Եսայի վարդապետի հետ, որին հիշում է Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ³։ Այս Եսայի վարդապետը եղել է Մեղրեցի, եպիսկոպոս է ձեռնադրվել Փիլիպոս կաթողիկոսի կողմից, իսկ հետո եղել է Երնջակ գավառի Ս. Կարապետ վանքի առաջնորդ։

Վերջապես, պատմական տվյալները համապատասխանում են նաև Շահ Աբբաս II-ի թագավորության ժամանակաշրջանի հետ։ Այստեղ Շահ Աբբասին «փոքր» են կոչել նրան ղանադանելու համար մեծ Շահ Աբբասից։

Եկեղեցու շինարարների մասին ոչինչ չէինք իմանա, եթե նախորդող վիճագրությունը մեզ չծանոթացներ նրանցից մեկին՝ Մելիք Ալեքսանին և շտեղծկացներ նրա նահատակության մասին։

Վեց տողերի վրա շարված վիճագրությունը առաջին բառերից հետո պարզ չափածոյի ընթացք է ստանում.

ԽԱԶՍ ԵԻՍ ՇԻՆԵՅՈ ՀՈԳՈՅ/

ՓՐԿՈՒԹԵ(Ա)Ն ՄԵԼ(Ի)Ք ԱԼԵՔ/ՍԱՆԻՆ

ԱՐԵԱՄԲ ՆԵՐԿԵԱԼ / ՔՐԻՍՏՈՆԷԻՆ

ԱՆՄԵՂ / ՍՊԱՆՆԵՑ ԶԵՌԱՄԲ ԱՊ(Ա)ՍԻ ՂՈՒԼԻ ԽԱՆԻՆ

ՌԺԹ ԹՎԻՆ (=1660)

Հավանաբար այս Ապաս-ղուլի-խանը, որի ձեռքով նահատակվել է Մելիք Ալեքսանը, տեղական իշխաններից է եղել։ Մոտավորապես նույն տարիներին գոյություն է ունեցել մի ուրիշ Ապաս-ղուլի-խան, որն իշխել է Երեվանում⁴։

Տարակույս չկա, որ Մելիք Ալեքսանը, որի մահը 1660 թ. հիշատակվում է այսքան կարևոր տեղում, ճիշտ գլխավոր արձանագրության վերևը, նույն տեղում պիտի լինի, որին քիչ առաջ տեսանք եկեղեցին շինողների մեջ⁵։

Դարաշամբ անունով ծանոթ են երեք գյուղեր, որոնք գտնվում են Տըղմուտ գետի հովտի և Արաքսի աջ ափի միջև։ Այս գյուղերն ըստ իրենց դիրքի ստանում են ածականներ՝ ստորին, միջին, վերին։ Ամենամեծը և առավել ծանոթը ստորին կամ առաջին Դարաշամբն է, որը գտնվում է երկու գետերի միացման տեղից մի քիչ դեպի արևելք։ Գյուղը ծանոթ է Շամբ (կամ Շամբիձոր) անունով։

³ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 347։

⁴ Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, Երևան, 1977, հատ. 3, էջ 571։ Այստեղ Երևանի ամիրանների, խաների և օսմանյան փառանքների անվանացանկում նշված է մի Աբբաս-կուլի-խան Ղաջար, 1633—1666 թթ.։

⁵ Սա թվում է մի նոր տվյալ, որով հնարավոր է լրացնել Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի «Հայոց նոր վկաները» (Վաղարշապատ, 1903, հատ. II)։

Այս գյուղը, որն այցելեցինք 1977 թ. մեր ուղևորության ժամանակ, շատ հետաքրքրական է նրանով, որ այն թեև այսօր բոլորովին ամայի է, սակայն դեռևս նկատվի է նրա սկզբնական հատակագիծը. պահպանվել են՝ եկեղեցին գետի ափին, նրա շուրջը տների հիմքերը և մի քանի հարյուր մետրը դեպի հարավ, լեռան ստորոտում, տարածվում է գերեզմանատունը։ Այստեղ երևում են մատուռներից մեկի ավերակները։

Գյուղի մասին մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի վերաբերյալ թեև քիչ տեղեկություններ կան, բայց շատ հետաքրքրական։

Առաջել Դավրիժեցին⁶ հիշատակում է Դարաշամբի նավահանգիստը, որը նախիջևան ժամանողներին հնարավորություն էր տալիս այստեղից անցնելու Արաքսը։ Իսկ Ալիշանը «Սիսականում»⁷ երկու կարևոր տեղեկություններ է տալիս. նա խոսում է մի եկեղեցու մասին, որը շինվել կամ վերանորոգվել է 1626 թ., և անվանի Արիստակես վարդապետի մասին, որն ապրել է XVI դարի վերջին և XVII դարի սկզբին։ Սա Տաթևի Մեծ Անապատի երկրորդ առաջնորդն է եղել և այնտեղ էլ մահացել է։ Մեր վիճագրական աղբյուրները հաստատում են այս տվյալները և հնարավորություն են տալիս պատկերացնելու, որ Արաքսի ձախ ափի գյուղերի ու քաղաքների հետ սերտորեն կապված այս գյուղում երկար դարերի ընթացքում գոյություն է ունեցել բավականաչափ աշխույժ կյանք։


Գյուղում վիճագրական տեսակետից ամենաճոխ հուշարձանը եկեղեցին է, որի ներսում կան շատ խաչքարեր։ Դրանց մի մասը, ըստ սովորության, ամրացված են պատերի կամ սյուների մեջ, իսկ մյուս մասը տարօրինակ կերպով վերստին օգտագործված են զարդարելու համար փոքր լուսամուտները և բազմաթիվ խորշեր, որոնք բացվում են կոնքերի պատերում, աբսիդում և ավագ խորանի կողքերին գտնվող երկու սենյակներում։ Այս խաչքարերը կարճացվել և հարմարեցվել են խորշի մեծությանը. նույնիսկ դրանք զրվել են հորիզոնական դիրքով, խորշի հատակում կամ վերևի մասում, այնպես որ այս դրությամբ զուտ զարդի նպատակով են գործածվել, իսկ արձանադրությունները անընթեռնելի են դարձել։ Այս արձանադրությունների մի մասը, ինչպես կտեսնենք, արժեքավոր տեղեկություններ է պարունակում։

Դարաշամբի զլխավոր վիճագրությունը վերաբերում է եկեղեցու շինությանը և գտնվում է արևմտյան մուտքի քովթարում։ Այն գրված է երկաթագիր տառերով և բաղկացած է հինգ տողից (նկ. 3)։

ՇՆՈՐՀԻԻ ՏՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ(ԵԱՄ)Բ ՆՈՐԻՆ ԵՍ ԴԸՍՏԱ-/
 ԿԷՍ Վ(Ա)ԴԴ(Ա)Պ(Ե)ՏՍ ՈՐ ԵՄ ՏԵՂԵԱԻՍ ՇԱՄԲԵՏԻ ԱՇ(Ա)Կ(Ե)ՐՏ
 Մ(Ո)ՎՍ(Է)Ս Վ(Ա)ԴԴ(Ա)Պ(Ե)Տ(Ի)Ն /
 Կ(Ա)Մ(Ա)ԿՅՈՒԹ(ԵԱՄ)Բ Մ(Ա)Ղ(Ա)ԴԴ(Ա)Վ(Ա)Ն(Ի)Ց ՄԻ(Ա)Բ(Ա)Ն(Ի)Ց
 ԵՒ ՇԱՄԲԻ ՄԵՄԻ ԵՒ ՓՈՔՈՒ ՁԵՌ-/
 ՆԱՐԿԵՅԻ ՋԵԿ(Ե)Ղ(Ե)Յ(Ի)Ս ԵՒ Շ(Ի)Ն(Ե)ՅԻ Կ(Ա)ՄՕՔՆ ԱՅ Թ(Ա)Գ(Ա)-
 Վ(Ո)Ր(Ո)ԻՍԻ(Ի)Ն Շ(Ա)Հ(Ա)Բ(Ա)Ս(Ի)Ն ՀԱ-/
 ՔՄԵԹԻ ՄԱԽՍՈՒՏ Ս(Ո)ԻԼԹ(Ա)Ն(Ի)Ն ԱԹ(Ա)ՋՆ(Ո)ՐԴ(Ո)ԻԹԻ(Ի)Ն Պ(Ե)Տ-
 Ր(Ո)Ս ԵՊ(ԻՍԿՈՊՈ)Ս(Ի)Ն ԹՎ(Ի)Ն ՌՀԷ (=1628)

⁶ Առաջել Դավրիժեցի, էջ 237։

⁷ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 515։



Նկ. 3

Զարմանալի է, որ այսքան կարևոր և այսպիսի ակնառու դիրքում գտնվող մի վիմագրություն ոչ մի հրատարակված աղբյուրում մեզ չի հանդիպել։ Ալիշանը «Սիսականում»⁸ արձանագրությունը չի մեջբերում, միայն հիշեցնում է, որ եկեղեցին կառուցվել է 1626 թ.։ Քանի որ վերջին տառը հստակորեն կարդացվում է «է» և ոչ թե «ե», ուստի հարկ ենք համարում թվականը ճշտել և դարձնել 1628, փոխանակ 1626-ի։ Ալիշանի մյուս տվյալները հաստատվում են վիմագրության մյուս տեղեկություններով։ Արիստակեսը, կամ Ռստակեսը, շամբեցի է և եկեղեցին կառուցել տվողը։ Վիմագրության շարունակության մեջ ասվում է, որ Ռստակեսը Մովսես վարդապետի աշակերտն է եղել։ Այս Մովսեսը Մովսես Խոյանանցին կամ Տաթևացին է, որը մեկ տարի հետո՝ 1629 թ. կաթողիկոս պետք է օծվեր, արդեն 1608 թ. նա հիմնադրել էր Տաթևի հայտնի Արանց Անապատը, որի երկրորդ առաջնորդն է եղել Ռստակեսը, պարոնտեր Սարգսի մահից հետո⁹։ Ռստակեսը, ուրեմն, այս աստիճանն ուներ, երբ նա դարձավ իր ծննդավայրի եկեղեցու շինության մղիչը։

Նրա մասին կա նաև մի այլ հիշատակարան, որը գտնվում է եկեղեցու ներսում, խաչքարերից մեկի ներքևի մասում (Նկ. 4)։

ՍԲ Խ(Ա)ՉՍ Յ(Ի)Շ(ԱՏԱ)Կ ՌՍՏ(Ա)Կ(Է)Ս
Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)Տ(Ի)Ն ԵՒ ՔՎ(Ե)ՐՅՆ՝
Խ(Ա)ՆՈՒՄ(Ի)Ն, ՉԱՂ(Ա)Ր(Ի)Ն, Խ(Ա)Ն-
ԲԷԿ(Ի)Ն, Խ(Ա)Թ(ՈՒ)ՆԻՆ, ՍԱՌ-
ԻՆ։ ՏՐ՝ Վ(Ա)ՐԴ(Ա)ՆԱՆ։ ԹՎ ՌՉԷ (=1628)

Վերջին տողում թվականը թեև մասամբ է միայն կարդացվում, սակայն առկա երկու տառերը, գրչության տեսակետից, հնարավոր է լրացնել իբրև «ՉԷ», ուստի թվականը դարձյալ ստացվում է 1628։ Վերջին տողում հիշատակված Տէր Վարդանանը հավանաբար մի անձանոթ փորագրող է։

⁸ Նույն տեղում։

⁹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1942—1962, հատ. I, III։

Վերադառնալով նախորդ արձանագրությանը, ուշադրավ է նկատել նաև, որ հկեղեցու շինության կամակից են հղել Մադաբդավանքի, այսինքն Ս. Ստեփանոս վանքի միաբանները և Մեծ ու Փոքր Շամբի ժողովուրդը: Հարկավ այս «կամակցությունը» դրսևորվել էր նաև նյութական օգնությամբ:



Նկ. 4

Վիճագրության վերջում, ըստ սովորության, տրվում է թվականը՝ հաստատված լատմական տվյալներով: Այսպես, այստեղ հիշատակվում է Շահ Աբբասի թագավորության (1587—1629 թթ.) և Պետրոս եպիսկոպոսի առաջնորդության մասին: Այս երկուսի միջև սղված ձևով հիշատակվում է նաև հաճմեթի Մախսուտ սուլթանին արտահայտությունը: «Հաքմեթի» բառի մեջ նշված է արաբերեն «իշխանություն» նշանակող արմատը: Հետևաբար «Հաքմեթի» կրճատումը, դատելով «թագավորություն» և «առաջնորդություն» բառերից, կարող է կարդացվել իբրև «հաքմեթություն»: Այս արտահայտությունն անշուշտ նշանակում է «Մախսուտ սուլթանի իշխանության օրերին»:

Պատմական առումով՝ Պետրոս եպիսկոպոսի անձնավորության ճշտումը թողնում ենք Արաքսի ձախ ափին գտնվող արձանագրությունները և XVII դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններն¹⁰ ուսումնասիրողին: Իսկ նախնականի իշխան Մախսուտ սուլթանի¹¹ հիշատակումն այստեղ ընդգծում է նրա կարևոր դիրքը և հայտնում է Դարաշամբի կախումը նախնականից, այսինքն՝ գետի ձախ ափին գտնվող մի քաղաքից:

Բերենք մեր ասածին մի ուրիշ ապացույց. Դարաշամբի գերեզմանոցում հատուկ մի տապանաքար կա, որը կազմված է միակտոր քարից: Սրա կենտրոնում (առանց որևէ խաչի, որ շատ բացառիկ երևույթ է), կա կիսադնդաձև մի խոշոր զարդ, որի շուրջը, կլոր ժապավենի մեջ, գրված է հետևյալ արձանագրությունը.

«ԹՎԻՆ ՌԿԹ. ՍԱ Է ՏԱՊԱՆ ԲԷԿԻՋԱՆԻՆ ՈՐ Է Դ(ՈՒ)ՍՏՐ ԲԱԲԱՅՋԱՆԻՆ»

Այս տապանաքարն իր կլոր զարդով և մանավանդ ժապավենի մեջ զետեղված արձանագրությամբ անմիջապես մեզ հիշեցնում է Հին Ջուղայի գերեզմանատան հայտնի խաչքարերից մի քանի նմուշ, թեև Դարաշամբի տապանաքարը շատ ավելի պարզ է: Սա ևս մի փաստ է, որը վկայում է Դարաշամբի հարաբերություններն Արաքսի մյուս ափի բնակավայրերի հետ:

Ժամանակագրական տեսակետից էլ Դարաշամբի պատմությունը, մեղթվում է, որ հետադոտության լայն հնարավորություններ է տալիս: Եկեղեցում, ինչպես արդեն ասացինք, խաչքարեր կան, որոնք վկայում են հայ գաղութի աշխույժ կյանքի մասին ներկա եկեղեցու շինությունից դեռևս շատ առաջ:

Խորշերի վերագտագործված խաչքարերի վրա թվականներ կան՝ 1590, 1554, 1541, որոնք հայ բնակչության գոյությունն այստեղ գրեթե մեկ դարով առաջ են տանում: Հիշատակված թվականներից ամենավաղը 1541-ն է:

Ավելացնենք, որ եթե Արաքսի հովտով մի քիչ իջնենք դեպի արևելք, Ս. Հովվի մատուռի փոքր գերեզմանոցում արդեն գտնում ենք երեք տապանաքար, որոնց թվականներն են՝ 1578, 1545, 1502:

Դարաշամբի հայ բնակիչների մասին ուրիշ տեղեկություններ կարող ենք քաղել Ս. Ստեփանոս վանքի վիճագրություններից: Այստեղ կան 13 ուխտավորական հիշատակարան-արձանագրություններ XVI—XIX դդ.: Ընծալողներից շատերը կրում են «մահտեսի» տիտղոսը: Այս հանգամանքը վկայում է ոչ միայն նրանց կրոնական զգացումների, այլև այն մասին, որ նրանք նյութական միջոցներ են ունեցել հեռավոր ճանապարհորդություն կատարելու համար:

Սակայն XX դարի սկզբում Դարաշամբ գյուղն արդեն շատ վատ վիճակի մեջ էր: Ինչպես ևրևում է Գրիգոր Բալասյանցի 1902 թ. ճանապարհորդական հուշերից¹², այստեղ տիրում էր աղքատությունն ու տղիտությունը: Բալասյանցը սլաքում է, որ ինքը, Ս. Ստեփանոս վանքը գնալիս, բարձր լեռներում ճանապարհը կորցնում է և երեկոյան հանդիպում է երեխաների, որոնք

10 Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Հայերեն ձեռագրերի Ժ. դարի հիշատակարաններ (1621—1640 թթ.), Երևան, 1978, հատ. II:

11 Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 192, 194, 556:

12 Գ. Բալասյանց, ճանապարհորդական տպավորություններ—Ջուղայից Արաքսի ափերում դեպի Դարաշամբ, «Բանասեր», 1902, էջ 340—347, 359—361:

հրավիրում են նրան գիշերելու գյուղում: Բալասյանցը տեղեկություններ է տալիս բնակիչների նյութական և մտավոր աղքատության մասին: Գյուղացիները ոչ դպրոց են ճանաչում, ոչ եկեղեցի և ոչ էլ վարդապետ: Եկեղեցու մասին շատ կարճ է խոսում: Ոչ մի տեղեկություն չի տալիս վիմագրությունների և խաչքարերի մասին. սա մեղ շատ է դսրմացնում, որովհետև խաչքարերը, գոնե իբրև դարդ, շատ նկատելի են իրենց քանակով և դեղեցկությամբ: Վիմագրական և ոչ վիմագրական մեր վկայությունները քննելիս մենք փորձել ենք դրանք կապել իրենց շրջանի պատմության հետ և անել որոշ եզրակացություններ:

Ամենից առաջ՝ մեր նյութերի մեջ մի ընդհանուր նմանություն կա. մեր գլխավոր վիմագրությունները, որոնք վերաբերում են Հաֆթվանի և Դարաշամբի եկեղեցիների շինությանը, պատկանում են XVII դարի առաջին կեսին, թեև մի քանի տասնամյակների տարբերությամբ:

Այս վիմագրությունները վկայում են հայերի շինարարական այն մեծ էռանդի մասին, որն սկսվում է XVII դարի սկզբի ավերակ վիճակից հետո: Այս մասին վառ կերպով վկայում է Առաքել Դավրիժեցին. «Կան և բազում վանօրեայք նորոգեալ և բազում եկեղեցիք ի հիմանց նոր շինեալք ի քաղաքն Տփխիս, և ի գաւառն Լօուռյ և ի յաշխարհն Արարատու... ի քաղաքն Նախուան, և ի գեղօրայս սորա, որպէս չքնաղ և մեծաշուք և վայելուն եկեղեցիք Աստապատու... որք շինեցան յաւուրս տեառն Յակովբ կաթողիկոսի...»¹³: Այնուհետև Դավրիժեցին մի քիչ ետ գալով դեպի մեր ժամանակները, շարունակում է. «... և Թավրիզու քաղաքի եկեղեցին, և Դարաշամբայ եկեղեցին և Յղնոյ եկեղեցին, սոքա և այլք յովովք՝ զորս ոչ լիշեմ, ոմանք յաւուրս Մովսէս կաթողիկոսին շինեցան և ոմանք յաւուրս Փիլիպպոս կաթողիկոսի...»¹³:

Անտարակույս, կան նաև տարբերություններ, որոնք պահանջում են տարբեր մոտեցում.

Սալմաստի շրջանը, Հաֆթվան գյուղով, ներկայացնում է դուղական մի տնտեսություն, հայ բնակչությամբ լի մի գավառ, որը, սակայն, հայկական մշակույթի աղղեցությունը հեռվից է դրում: Այստեղ XVII դարից առաջ եղած պատմական հուշարձանները այժմ մեղ անծանոթ են: Թեև Վանի շրջանի հետ հարաբերություններ եղել են, մանավանդ վտանգի ժամանակ, սակայն Սալմաստն այսօր մեղ թվում է իբրև ինքնամփոփ և փակ մի աշխարհ:

Ընդհակառակը, Դարաշամբի շրջանը, որը լեռնային մի աշխարհ է, որտեղ գյուղատնտեսությունը գրեթե անհնար է և քիչ դուղեր կան, մեղ թվում է, որ շարունակ հարաբերության մեջ է եղել Հայաստանի պատմական գավառների հետ: Արաքսը նպաստում էր այդ վիճակին, մանավանդ, որ նրա շատ ավելի բազմամարդ ձախ ափով գնում էր առևտրի մեծ ճանապարհը, որը միացնում էր Կովկասը Պարսկաստանի հետ:

Այսպիսով, մեր հավաքած նյութերը կմնան որպես խճանկարի անջատված կտորներ, եթե Արաքսի իրանական ափին եղած ուրիշ վկայություններ հետ հավասարապես չհետադուրվեն նաև ձախ ափին դեռևս գոյություն ունեցող վկայական աղբյուրները: Այսպիսի միացյալ քննությամբ միայն հնարավոր կլինի վերականգնել հայ ժողովրդի պատմության հետաքրքրական էջերից մեկը:

¹³ Առաքել Դավրիժեցի, էջ 353:

ЭПИГРАФИКА ПАМЯТНИКОВ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ
СЕВЕРНОГО ИРАНА

ГАБРИЭЛА УЛУОДЖЯН (Италия)

(Резюме)

Возглавляемая проф. Альпаго-Новелло итальянская научная экспедиция включила в свою программу составление свода армянской эпиграфики на территории Северного Ирана. В данном сообщении впервые публикуются надписи из Автана (неподалеку от Салмаста) и Дарашамба (близ монастыря св. Стефана Первомученика). Они содержат значительный материал по социальной, политической и культурной истории края, в частности — названных поселений. Эти надписи содержат также данные о сооружении и последующих обновлениях архитектурных памятников. В публикации уделено должное внимание идентификации упоминаемых в надписях исторических лиц и этнической истории близлежащих армянских поселений.